

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/6

7 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Լևոն» ՍՊԸ 05.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 04.05.2015 թ-ի թիվ 696 որոշումը մասնակի՝ 208.099 դրամի չափով (տույժի գումար) անվավեր ճանաչելու վերաբերյալ:

**«Լևոն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Լևոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 12.01.2015թ.-ին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է 2014 թ-ի համար շահութահարկի հաշվարկ (հաշվետվություն), ինչը համակարգի կողմից ընդունվել է և ներկայացման պահին համարվել վավեր, ինչի մասին է վկայում նաև ուղարկված հաշվետվության ստացման մասին համակարգի ծանուցումը:

«ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 01/10 ՈՒ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 01/8 ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱ ՀՊԾ 02.04.2004թ. Ա 1-05/7-Ն ՀՐԱՄԱՆԻ 9.12-ՐԴ ԿԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ պարբերության համաձայն՝ 12.01.2015թ.-ից ընկերության 2014 թ-ի շահութահարկի փաստացի գումարը հայտնի դառնալուց հետո ընկերության՝ հարկային մարմնում բացված հարկային պարտավորությունների անձնական հաշվի քարտում դադարեցվել է շահութահարկի կանխավճարային մուծումների նկատմամբ տույժերի հաշվարկը:

15.04.2015թ.-ին ընկերությունը նկատելով, որ 12.01.2015թ.-ին հանձնված հաշվետվության կարգավիճակը փոխվել է՝ կապված հաշվետվության ձևում տեղ գտած որոշ տեխնիկական փոփոխությունների հետ, պատշաճ հաշվետվողականություն ապահովելու նպատակով էլեկտրոնային եղանակի ևս մեկ անգամ ՀՏ է ներկայացրել 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը, որտեղ թե՛ հարկման բազան, թե՛ շահութահարկի գումարը փոփոխության չեն ենթարկվել (ի համեմատ 12.01.2015թ.-ին ներկայացված հաշվետվության):

Ընկերությունը, սակայն, հետագայում հայտնաբերել է, որ շահութահարկի կանխավճարային գումարների նկատմամբ տույժերի հաշվարկի դադարեցման ամսաթիվը տեղափոխվել է 15.04.2015թ.՝ կապված այն հանգամանքի հետ, որ 12.01.2015թ.-ին հանձնված հաշվետվությունը (հաշվետվության ձևի փոփոխված տարբերակի հետ կապված) ընդունված չի համարվել, և պատշաճ (վավեր) ներկայացված է համարվել 15.04.2015թ.-ի հաշվետվությունը:

Արդյունքում, ընկերության նկատմամբ 2014թ.-ի շահութահարկի կանխավճարի տույժերն արհեստականորեն հաշվարկվել (տարածվել) են մինչև 15.04.2015թ.-ը ներառյալ: Հարկ է նշել, որ Ընկերության անհատական քարտում առկա է եղել գերավճար՝ 167.323 ՀՀ դրամի չափով, իսկ տույժերը հաշվարկվել են 375.323 ՀՀ

դրամի չափով, իսկ ապա նվազեցվել գերավճարի՝ 167.323 ՀՀ դրամի չափով, և արդյունքում Ռբոշմամբ արտացոլվել է 208.099 ՀՀ դրամ, որպես տույժի գումար:

Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

- 12.01.2015թ.-ին էլեկտրոնային հաշվետվությունների համակարգում դեռևս տեղադրված չի եղել նոր (փոփոխված) հաշվետվողական ձևը, որը, այնուամենայնիվ, բովանդակային առումով նույն է, ինչ նախկին գործող ձևը, իսկ ընկերությունն իր հաշվետվությունը ներկայացրել է ներկայացման պահին էլեկտրոնային համակարգում գործող ձևով,

- 12.01.2015թ.-ին համակարգը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու շահութահարկի հաշվարկը (այդ պահին գործող ձևով), ընդունել է այն և գեներացրել ընդունման վավերականությունը հավաստող համապատասխան ծանուցագիր,

- 2014 թ-ի համար ընկերությունը հանդիսանում է բացառապես էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող, ուստի իրավունք չունեն թղթային եղանակով տրամադրելու համապատասխան հաշվետվությունը նոր հաշվետվողական ձևով,

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով ամրագրված է, որ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով: Ակհայտ է, որ ընկերությունը փաստացի կատարել է 02.04.2004թ. N 1-05/7-Ն հրամանի 9.12-րդ կետի դրույթի պահանջը, այն է՝ հարկային մարմինն հայտնի է դարձրել իր շահութահարկի գումարի մեծության մասին իր կողմից ներկայացված հաշվետվությամբ, ներկայացրել է տվյալ հաշվետվությունն այդ պահին գործող (առկա) ձևով, ավելին՝ հաշվետվությունն համարվել է պատշաճ ներկայացված և ընդունված հենց ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

Նշված խնդրի կապակցությամբ ընկերությունը դիմել է Կենտրոն ՀՏ, սակայն ստացել է բանավոր/գրավոր պատասխան առ այն, որ շահութահարկի կանխավճարների գծով պարտավորությունների (տույժերի) առաջացման օրինականության հարցը կարող է քննվել ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վերը նշված փաստարկներով ու իրավական հիմքերով, ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ Կենտրոն ՀՏ պետի 04.05.2015թ. թիվ 696 որոշումը մասնակի՝ 208.099 ՀՀ դրամի չափով տույժի մասով ճանաչել անվավեր և վերացնել, միաժամանակ ճանաչելով «Լևոն» ՍՊԸ-ի անհատական քարտում գերավճարի առկայությունը՝ համապատասխան չափով:

**ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Լևոն» ՍՊԸ-ն 12.01.2015թ.-ին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի

միջոցով ներկայացրել է 2014 թ-ի համար շահութահարկի հաշվարկը, ինչը համակարգի կողմից ընդունվել է:

Այնուհետև 15.04.2015 թ-ին ընկերությունը նկատելով, որ 12.01.2015թ.-ին հանձնված հաշվետվության կարգավիճակը փոխվել է՝ կապված հաշվետվության ձևում տեղ գտած որոշ տեխնիկական փոփոխությունների հետ, ևս մեկ անգամ ՀՏ է ներկայացրել 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը, որտեղ թե՛ հարկման բազան, թե՛ շահութահարկի գումարը փոփոխության չեն ենթարկվել:

Արդյունքում, ընկերության նկատմամբ 2014 թ-ի շահութահարկի կանխավճարի տույժերն հաշվարկվել են մինչև 15.04.2015 թ-ն ընկած ժամանակահատվածի համար: Այսինքն, 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը համարվել է ներկայացված 15.04.2015 թ-ից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն. «Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկ»:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով սահմանված է «ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու» կարգը: Նշված Կարգի 8-րդ կետի համաձայն. «Հարկ վճարողն էլեկտրոնային հաշվետվություն ներկայացնելու համար՝

1) հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի ([www.taxservice.am](http://www.taxservice.am))՝ էլեկտրոնային հաշվետվություններին վերաբերող բաժնում էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի միջոցով մուտք է գործում հարկ վճարողի դարան, ընտրում համապատասխան հաշվետվության ձևը, լրացնում, էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրում և հաստատում, որից հետո հաշվետվությունն ուղարկվում է հարկային մարմնի տեղեկատվական համակարգ.»:

Քննարկվող դեպքում ընկերությունը Կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով 12.01.2015 թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահութահարկի հաշվարկի ձևը ենթարկվել է փոփոխության, 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը հարկային տեսչության կողմից համարվել է ներկայացված միայն 15.04.2015 թ-ից, երբ ընկերության կողմից երկրորդ անգամ ներկայացվել է հաշվարկի փոփոխված տարբերակը: Ընդ որում հարկ է նշել, որ թե 12.01.2015 թ-ին և թե 15.04.2015 թ-ին ներկայացված շահութահարկի հաշվարկներում ներառված տվյալները չեն փոփոխվել:

Հանձնաժողովի համոզմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով ընկերությանն իրավունք է վերապահվել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներկայացնել հարկային մարմնի կողմից հաստատված ձևի շահութահարկի հաշվարկը, ինչը ընկերության կողմից կատարվել է 12.01.2015 թ-ին, ինչպես նաև այն, որ հաշվարկի նոր ձևը հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվել է միայն 09.04.2015 թ-ին, հետևապես հարկային տեսչության գործողությունները՝ ընկերության կողմից 12.01.2015 թ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված

շահութահարկի հաշվարկը չներկայացված համարելու հետևանքով լրացուցիչ պարտավորությունների առաջադրման ուղղությամբ, չեն կարող իրավաչափ համարվել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության կողմից 15.04.2015 թ-ին երկրորդ անգամ ուղարկված շահութահարկի հաշվարկի ներկայացման ամսաթիվն անհրաժեշտ է համարել 12.01.2015 թ-ը, երբ առաջին անգամ ներկայացվել է 2014 թ-ի շահութահարկի հաշվարկը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

«Լևոն» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոն ՀՏ պետի 04.05.2015թ. թիվ 696 որոշումը մասնակի՝ 208.099 ՀՀ դրամ տույժի մասով անվավեր ճանաչելու, ինչպես նաև ընկերության անձնական հաշվի քարտում համապատասխան չափով գերավճարի առկայությունը ճանաչելու վերաբերյալ, բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

